Աշխատանքի ծածկագիր 88123

ՈՐՈՇՈՒՄ

ք. Երևան

17.12.2024թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
Նախագահությամբ՝ Ալեքսանդրա Հարությունյանի
Մասնակցությամբ անդամներ՝
Անի Հարությունյանի
Քրիստինե Ալեքսանյանի

քննության առնելով վարչական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը.

ՊԱՐԶԵՑ

Բողոքարկվել են տարբերակ 1-ի վարչական իրավունք բաժնի 3-րդ, 7-րդ, 29-րդ, 40-րդ և 44-րդ հարցերը:

Հարց 3

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ առաջադրանքով ներկայացված խնդրի վերաբերյալ առկա է նաև Սահմանադրական դատարանի 07.11.2017 թվականի թիվ ՍԴՈ-1383 որոշումը, որով Սահմանադրական դատարանն ուղղակիորեն արձանագրել է, որ հիմնարար իրավունքների խախտման դեպքում ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ անկախ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից:

Հարց 7

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Բարձրագույն դատական խորհրդի 17.09.2024 թվականի թիվ ԲԴԽ-85-Ո-173 որոշման 2-րդ հավելվածի 32-րդ կետի համաձայն՝ հավակնորդներին արգելվում է գրավոր աշխատանքում գրել իրենց անունը կամ կատարել որևէ այլ նշում, որը կարող է անհատականացնել գրավոր

աշխատանքը, իսկ հարցը սխալ նշելու հետևանքով կատարած ջնջումի դեպքում տվյալ հարցը միավոր չի ստանում:

Հարց 29

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումը վարչական վարույթի ընթացում ընդունվող ընթացակարգային փաստաթուղթ է, վարչական ակտ չէ, հետևաբար ենթակա չէ բողոքարկման:

Հարց 40

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությամբ ուղղակիորեն սահմանված է, որ բանավոր վարչական ակտը կարող է ընդունվել օրենքով նախատեսված դեպքերում:

Հարց 44

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասն ուղղակիորեն սահմանում է, որ այլ ձևի վարչական ակտերն ուժի մեջ են մտնում այդ ակտերը հրապարակելու պահից, իսկ Հավակնորդը նշել է այլ ձևի վարչական ակտի հրապարակման ձևին, ոչ թե ուժի մեջ մտնելուն վերաբերելի կարգավորումը:

ՈՐՈՇԵՑ

Թիվ 88123 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքն ամբողջովին մերժել: Վարչական իրավունք բաժնի ընդհանուր միավորը թողնել անփոփոխ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ք. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ